ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/208

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Բալասանյանի (պետական գրանցման համար՝ 264.110.05665),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9975-2022 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 26.05.2022թ. թիվ 08-137 գրության հիման վրա, 31.05.2022թ. թիվ 26/26-1/9975-2022

գրությամբ նախաձեռնել է «Խաչպար» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Խաչպար» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.06.2022թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարություն էր հրապարակել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12 ծածկագրով բաց մրցույթի մասին, որը հաստատվել էր գնահատող հանձնաժողովի 16.11.2021թ. թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի մասնակից «Խաչպար» ՍՊԸ-ի հետ 24.01.2022թ. կնքվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15 ծածկագրով պայմանագիրը և նրան կից Հավելվածները, որի Հավելված 2՝ Վճարման ժամանակացույցում նշված է «Ֆինանսական միջոցներ նախատեսված չեն: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս», քանի որ մրցույթը կազմակերպված էր ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1-5):

Պատվիրատուն առանց «Խաչպար» ՍՊԸ-ի հետ Համաձայնագրի կնքման (Համաձայնագրի կնքման առաջարկը Պատվիրատուի կողմից արվել է 2022թ. ապրիլի 24-ին)՝ 2022թ. փետրվարի 1-ին և մարտի 3-ին «Խաչպար» ՍՊԸ-ին էլ. փոստով ներկայացնում է պահանջագրեր՝ պայմանագրով նախատեսված «Էլեկտրոդ ԷՍԳ-ի մանկական» անվանումով ապրանքի մատակարարման համար (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1-2):

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ նկատի ունենալով «Էլեկտրոդ ԷՍԳ-ի մանկական» անվանումով ապրանքի կենսական անհրաժեշտությունը «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ում բուժվող և վիրահատվող հիվանդ երեխաների կյանքի և առողջության պահպանման գործում, առանց երկկողմանի կնքված Համաձայնագրի առկայության՝ կատարել է ապրանքի մատակարարումներ ս.թ. փետրվարի 9-ին և մարտի 14-ին (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1-2), որոնց համար էլ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն՝ նույնպես առանց երկկողմանի կնքված

Համաձայնագրի առկայության, կատարել է վճարումներ ս.թ. փետրվարի 15-ին և մարտի 18-ին (կից փաստաթուղթ թիվ 5, էջեր՝ 1-2):

2022թ. ապրիլի 24-ին «Խաչպար» ՍՊԸ-ն էլ. փոստով ստանում է«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ–ի կողմից առանց ամիս-ամսաթվի ներկայացված «ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1»-ը որի թիվ 1.2 կետում գրված է՝ «1.2 Սահմանված կարգով ընդունված Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է 90 օրվա ընթացքում» (կից փաստաթուղթ թիվ 6), որտեղ նշված «90» թիվը չէր համապատասխանում կնքված Պայմանագրի թիվ 3.3 կետում՝ որպես վճարման համար նախատեսված ժամկետին, որը սահմանված է մինչև 30 աշխատանքային օրը (կից փաստաթուղթ թիվ 2, էջ՝ 2):

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով Պայմանագրի թիվ 8.5 կետի 1-ին պարբերության պահանջով՝ համաձայն որի «8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը»: (կից փաստաթուղթ թիվ 2, էջ՝ 3), 2022թ. ապրիլի 27-ին իր անհամաձայնությունն է հայտնում կատարված փոփոխությունը, չի կնքում այդ Համաձայնագիրը՝ դիմելով Պատվիրատուին, որպեսզի նա Համաձայնագրում գրի կնքված Պայմանգրով սահմանված «30» թիվը (կից փաստաթուղթ թիվ 7):

2022թ. ապրիլի 28-ին Պատվիրատուն թիվ 08-098 գրությամբ երկթերթանի պատասխան է ուղարկում «Խաչպար» ՍՊԸ-ին, սակայն այդտեղ առկա մեկնաբանությունները և եզրակացությունները վերաբերելի չեն «Խաչպար» ՍՊԸ-ի անհամաձայնությանը, քանի որ ոչ մի անդրադարձ չկա Պայմանագրի թիվ 8.5 կետի 1-ին պարբերությամբ սահմանված պահանջին՝ Կողմերի փոխադարձ համաձայնության մասին, և ըստ էության՝ դրանք առ ոչինչ են (կից փաստաթուղթ թիվ 8, էջեր՝ 1-2):

2022թ. մայիսի 2-ին «Խաչպար» ՍՊԸ-ն պատասխանում է Պատվիրատուին, նշելով, որ՝ «3) Պայմանագիրը կնքելով և ստորագրությամբ հաստատելով՝ Կողմերը արդեն իսկ ստանձնել են Պայմանագրի բոլոր կետերով՝ այդ թվում նաև թիվ 3.3 կետով, ամրագրված պահանջները և վճարման ժամկետները, իսկ հաջորդիվ կնքվող համաձայնագրերը վերաբերելի պետք է լինեն արդեն իսկ կնքված Պայմանագրով ստանձնած իրավունքների եւ պարտականությունների ուժի մեջ մտնելուն»: 4) «Խաչպար» ՍՊԸ-ն՝ հանդիսանալով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով Պայմանագիրը կնքած և ստորագրությամբ հաստատած Կողմերից մեկը, չի տալիս իր համաձայնությունը Կողմերից մյուսին՝ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ին, նրա կողմից կազմված Համաձայնագրի թիվ 1 1. «Համաձայնագրի

առարկան» բաժնում կատարելու այնպիսի փոփոփություններ, որոնք չեն համապատասխանում Պայմանագրի թիվ 3.3 կետում ամրագրված պահանջներին և սահմանումներին: Բացի այդ՝ լրացուցիչ կերպով տեղեկացնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն՝ հաշվի առնելով այդ ապրանքի կենսական անհրաժեշտությունը «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ում բուժվող և վիրահատվող հիվանդների կյանքի և առողջության պահպանման գործում, առանց Համաձայնագրի առկայության՝ կատարել է ապրանքի մատակարարումներ ս.թ. փետրվարի 9-ին և մարտի 14-ին, որոնց համար էլ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն՝ առանց Համաձայնագրի առկայության, կատարել է վճարումներ ս.թ. փետրվարի 15-ին և մարտի 18-ին, ինչպես նաև «Խաչպար» ՍՊԸ-ն «....հայտնում է իր պատրաստակամությունը՝ մատակարել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15 ծածկագրով Պայմանագրով պահանջվող «Էլեկտրոդ ԷՍԳ-ի մանկական» ապրանքի մնացած քանակները ևս՝ Պատվիրատուի ցանկացած պատվերի ժամանակ՝ առանց Համաձայնագրի առկայության»: (կից փաստաթուղթ թիվ 9, էջեր՝ 1-2):

2022թ. մայիսի 26-ին «Խաչպար» ՍՊԸ-ն ստանում է Պատվիրատուի 25.05.2012թ. թիվ 08-133 գրությունը, համաձայն որի՝ կողմերի միջև 24.01.2022թ. կնքված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով պայմանագիրը միակողմանի կերպով Պատվիրատուն լուծարում է՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից Համաձայնագիրը չկնքելու հիմնավորմամբ: Այդ որոշումը Պատվիրատուն հիմնավորում է կնքված Պայմանագրի 8.15 կետի սահմանումներով, փորձելով տպավորություն ստեղծել իրենց որոշման կայացման օրինական լինելու համար, այդտեղ ոչ մի նշում կամ հղում չկա այն մասին, թե ինչու է «Խաչպար» ՍՊԸ-ն հրաժարվել էնքել ներկայացված Համաձայնագիրը, որը կազմված է եղել կնքված Պայմանագրի 8.5 կետի սահմանումների խախտումներով, քանի որ առաջարկվող փոփոխության համար բացակայում է Կողմերից մեկի՝ «Խաչպար» ՍՊԸ-ի համաձայնությունը, որի մասին ոչ մի անդրադարձ չկա այդ գրությունում (կից փաստաթուղթ թիվ 10, էջեր՝ 1-2): «Խաչպար» ՍՊԸ-ն համաձայն չի եղել Պատվիրատուի 25.05.2022թ. թիվ 08-133 գրությունում առկա այդ որոշման հետ, և այդ գրությունը ստանալու հաջորդ օրը՝ 2022թ. մայիսի 27-ին, ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով, բողոք է ներկայացրել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որպեսզի բողոքներ քննող անձը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ ընդունի որոշում, որը կպարտավորեցնի Պատվիրատու «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ին՝ ընդունելու համապատասխան որոշումներ՝ չեղյալ հայտարարել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով պայմանագիրը միակողմանի կերպով լուծարելու Պատվիրատուի որոշումը

«Խաչպար» ՍՊԸ-ի հետ կնքվելիք Համաձայնագիրը համապատասխանեցնել կնքված Պայմանագրով սահմանված պահանջներին և սահմանումներին (կից փաստաթուղթ թիվ 11, էջեր՝ 1-4):

2022թ. մայիսի 31-ին «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի օգնական Օ. Կիրակոսյանի գրությունը և նրան կից փաստաթղթերը, համաձայն որոնց ՀՀ ՖՆ նախաձեռնել է «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի 26.05.2022թ. թիվ 08-137 գրության հիման վրա (կից փաստաթուղթ թիվ 12, էջեր՝ 1-2):

Հարգելի պարոն Գ. Ներսիսյան:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից 26.05.2022թ. ՀՀ ՖՆ առաքված թիվ 08-137 գրության մեջ առկա են կատարված փաստերի խեղաթյուրումներ, իրականության թերի և աղճատված ներկայացումներ, ինչպես նաև գործին վերաբերվող կարևոր փաստաթղթերի չներկայացնելը ՀՀ ՖՆ-ին, որոնց համադրումը բերում է այն եզրակացության, որ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն հերթական անգամ հակաօրինական և անհիմն կերպով փորձում է իրականացնել իր տարիների երազանքը՝ «Խաչպար» ՍՊԸ-ին ընդգրկել տալ այսպես կոչված սև ցուցակում, որի իրականացման համար «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից կատարվել են հետևյալ գործողությունները՝

1. ՀՀ ՖՆ-ին տրամադրված տեղեկությունների և փաստաթղթերի մեջ բացակայում է Պատվիրատուի 2022թ. ապրիլի 28-ի թիվ 08-098 գրությանը ի պատասխան «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 02.05.2022թ. ներկայացված դիրքորոշումը, ինչը շատ կարևոր և էական նշանակություն ունի այս գործի քննության համար (կից փաստաթուղթ թիվ 9, էջեր՝ 1-2):

2. ՀՀ ՖՆ-ին տրամադրված գրության մեջ նշված է «...Նշված պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում: «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով»:

Պատվիրատուն Համաձայնագիրը կնքելու առաջարկը «Խաչպար» ՍՊԸ-ին արել է 2022թ.ապրիլի 24-ին, իսկ մինչ այդ՝ առանց երկկողմանի կնքված Համաձայնագրի առկայության՝

ա) Պատվիրատուն ապրանքի մատակարարման պահանջագրեր է ներկայացրել 2022թ. Փետրվարի 1-ին և մարտի 3-ին:

բ) «Խաչպար» ՍՊԸ-ն կատարել է ապրանքի մատակարարումներ ս. թ. փետրվարի 9-ին և մարտի 14-ին:

գ) Պատվիրատուն կատարել է վճարումներ ս. թ. փետրվարի 15-ին և մարտի 18-ին:

3. ՀՀ ՖՆ-ին տրամադրված գրության մեջ նշված չէ, որ «Խաչպար» ՍՊԸ-ն չի կնքում ներկայացված Համաձայնագիրը այն պատճառով, քանի որ Պատվիրատուն Համաձայնագրում միակողմանի կերպով կատարել է կնքված Պայմանագրին չհամապատասխանող փոփոխություն:

Համաձայն Կողմերի միջև 24.01.2022թ. կնքված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով պայմանագրի թիվ 3.3 կետի՝ «3.3 ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում», այն դեպքում, երբ Համաձայանգրի թիվ 1.2 կետում գրված է՝ «1.2 Սահմանված կարգով ընդունված Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է 90 օրվա ընթացքում:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1. Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

4. ՀՀ ՖՆ-ին տրամադրված գրության մեջ նշված չէ, որ «Խաչպար» ՍՊԸ-ն չի տալիս իր համաձայնությունը՝ ներկայացված Համաձայնագրում այդ փոփոխությունը կամարելու համար:

Համաձայն կողմերի միջև 24.01.2022թ. կնքված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով պայմանագրի թիվ 8.5 կետի 1-ին պարբերության' <<8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Համաձայնագիրը կնքված Պայմանագրին համապատասխանեցնելու և կրկին «Խաչպար» ՍՊԸ-ի կնքմանը ներկայացնելու փոխարեն՝ Պատվիրատուն մայիսի 2-ից մինչև 18-ը անգործություն է դրսևորում, որպեսզի սպառի կնքման համար նախատեսված ժամկետը, ինչը Պատվիրատուի կողմից ներկայացվում է որպես Ընկերությունը համաձայնագիրը այդպես էլ չի կնքել և չի ներկայացրել պատվիրատուին, հետևաբար պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

5. ՀՀ ՖՆ-ին տրամադրված գրության մեջ նշված է Ընկերության կողմից իրականցվել են որոշ մատակարարումներ պայմանագրի շրջանակներում, որոնք ընդունվել են

Պատվիրատուի կողմից՝ անհրաժեշտությունից ելնելով, ուստի այդ մասով Պայմանագիրը համարվում է փաստացի կատարվարված Վաճառողի կողմից, ինչը իրականության աղավաղում քանի որ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն՝ առանց երկկողմանի կնքված Համաձայնագրի առկայության, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով Պայմանագրով ամբողջ տարվա համար պահանջվող 8000 հատ «Էլեկտրոդ ԷՍԳ-ի մանկական» ապրանքից ս. թ. փետրվարի 1-ին և մարտի 3-ին՝ ընտամենը 2 ամսվա համար, 3000-ից ավել քանակի (մոտ 40 %-ի չափով) մատակարարման համար երկու հայտեր է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ին: «Խաչպար» ՍՊԸ-ն՝ հաշվի առնելու այդ ապրանքի կենսական անհրաժեշտությունը «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ում բուժվող և վիրահատվող հիվանդ երեխաների կյանքի և առողջության պահպանման գործում, առանց երկկողմանի կնքված Համաձայնագրի առկայության՝ կատարել է ապրանքի մատակարարումներ ս. թ. փետրվարի 9-ին և մարտի 14-ին, որոնց համար էլ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն՝ առանց երկկողմանի կնքված Համաձայնագրի առկայության, կատարել է վճարումներ ս.թ. փետրվարի 15-ին և մարտի 18-ին:

6. ՀՀ ՖՆ-ին տրամադրված տեղեկությունների և փաստաթղթերի մեջ բացակայող՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 02.05.2022թ. ներկայացված դիրքորոշման մեջ, նաև նշված է որ «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնում է իր պատրաստակամությունը՝ մատակարել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով Պայմանագրով պահանջվող «Էլեկտրոդ ԷՍԳ-ի մանկական» ապրանքի մնացած քանակները ևս՝ Պատվիրատուի ցանկացած պատվերի ժամանակ՝ առանց Համաձայնագրի առկայության:

Վերոգրյալ փաստերը և ներկայացված փաստաթղթերը աներկբա կերպով հաստատում են, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թույլ չեն տրվել ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պահանջների և ոչ մի խախառումներ, ուստի խնդրում ենք մերժել «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունելող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը հիմքերի բացակայության հիմքով»:

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/208 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.05.2022թ. թիվ 08-137 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Խաչպար» ՍՊԸ-ին ներառելու նպատակով Ձեզ ենք տրամադրում հետևյալ տեղեկությունները «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 24.01.2022թ կնքվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15 ծածկագրով պայմանագիրը Նշված պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների, ինչպես նաև պայմանագրերի 8.15 կետի պայմանների «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է ֆինանսական միջոցների հատկացման և վճարման պայմանի վերաբերյալ համաձայնագիր կնքելու ծանուցումը Ընկերությանը ներկայացվել է 26.04.2022թ-ին, ուստի նա կրում էր պարտավորություն մինչև 18.05.2022թ. ներառյալ Պատվիրատուին ներկայացնել կնքված համաձայնագիրը: Փոխարենը Ընկերությունը հայտնել է իր անհամաձայնությունը համաձայնագրի պայմանների վերաբերյալ, ինչին ի պատասխան Պատվիրատուն տվել է համապատասխան պարզաբանումներ և դիրքորոշում: Ընկերությունը համաձայնագիրը այդպես էլ չի կնքել և չի ներկայացրել Պատվիրատուին, հետևաբար պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

Միաժամանակ, Պատվիրատուի պատվերների համաձայն, մինչև պայմանագիրը լուծելու գործընթաց նախաձեռնվելը, Ընկերության կողմից իրականցվել են որոշ մատակարարումներ պայմանագրի շրջանակներում, որոնք ընդունվել են Պատվիրատուի

կողմից՝ անհրաժեշտությունից ելնելով, ուստի այդ մասով Պայմանագիրը համարվում է փաստացի կատարված Վաճառողի կողմից:

Արդյունքում 25.05.2022թ-ին վերոնշյալ պայմանագիրը բժշկական կենտրոնի կողմից միակողմանի մասնակի լուծվել է՝ չմատակարարված ապրանքների մասով (Հրապարակվել է www. procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանը լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.05.2022թ.):

Կից ներկայացնում ենք կնքված պայմանագրի, դրա միակողմանի լուծելու մասին ծանուցման, ծանուցված համաձայնագրի նախագծի, փոստից քաղվածքի, Ընկերության անհամաձայնության մասին գրության, ինչպես նաև Պատվիրատուի հայտնած դիրքորոշման մասին գրության պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/208 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 24.01.2022թ. կնքվել է թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

3. Պատվիրատուի կողմից 26.04.2022թ. «Խաչպար» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագրի նախագիծը և առաջարկվել 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից կնքված համաձայնագիրը՝ երկու օրինակից:

4. «Խաչպար» ՍՊԸ-ն ուղղված Պատվիրատուին ուղղված 27.04.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«27.04.2022թ. «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է 24.01.2022թ. կնքված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով գնման Պայմանագրի թիվ 1 ամաձայնագիրը, որի թիվ 1.2 կետում գրված է՝ «1.2 Սահմանված կարգով ընդունված Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է 90 օրվա ընթացքում»:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ կնքված Պայմանագրի թիվ 3.3 կետում, որպես վճարման համար նախատեսված ժամկետ, սահմանված է մինչև 30 աշխատանքային օրը, ուստի ղեկավարվելով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով գնման պայմանագրի թիվ 8.5 կետով, «Խաչպար» ՍՊԸ-ն իր անհամաձայնությունն է հայտնում այդ փոփոխությանը և պնդում է, որ Համաձայնագրում վճարման ժամկետը նշվի համաձայն Պայմանագրով սահմանվածի՝ մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում»:

5. Պատվիրատուն «Խաչպար» ՍՊԸ-ին ուղղված 28.04.2022թ. թիվ 08-098 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր 27.04.2022թ. ներկայացրած անհամաձայնությանը՝ կնքվելիք համաձայնագրում նախատեսված վճարման ժամկետի կապակցությամբ, հայտնում ենք հետևյալը.

1) 24.01.2022թ կնքված թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15 պայմանագրի 3.3 կետում նախատեսված է, որ «Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը»:

2) պայմանագրի 8.15 կետով նախատեսված է, որ «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական

միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընտացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

Այս վերոնշյալ դրույթները մեկնաբանելիս չպետք է նախադասության մեջից առանձնացնել մի բառակապակցություն (վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում) և մեկնաբանել այն ինչպես հարմար է, քանի որ դա չի համապատասխանում նախադասության ուղիղ իմաստին: Նախադասությունները պետք է կարդալ ամբողջությամբ և մեկնաբանել ամբողջ միտքը նախադասություն առ նախադասություն. այն է՝

Նախադասություն 1. «Դրամական միջոցների փոխանցումը կատորվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին»:

Մեկնաբանություն 1. Այսինքն, եթե նախապես առկա չէ վճարման ժամանակացույց և այնտեղ ըստ ամիսների բաշխված գումարներ (ինչպես լինում Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարված ընթացակարգերում), հետևաբար որևէ ամսում(ժամկետում) վճարման մասին նախապես խոսք գնալ չի կարող:

Նախադասություն 2. «Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսանան միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մեկնաբանություն 2. Այսինքն, եթե վճարման ժամանակացույցով որևէ ամսում նախատեսված է ֆինանսական միջոց, և ապրանքը ընդունված է Պատվիրատուի կողմից, ապա այդ ամսում Պատվիրատուն պարտավոր է կատարել վճարումը, մինչև ամսի 20-ը ընդունված ապրանքների համար հենց այդ ամսում (այսինքն ավելի շուտ քան 30 օրն է), իսկ ամսի 20-ից հետք ընդունված ապրանքի համար 30 օրում: Այնուհետև, Եթե վճարման ժամանակացույցով այդ ամսում նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, այլ նախատեսված են ուրիշ ամսում (ասենք օրինակ նախատեսված են ապրանքի ընդունմանը հաջորդող 4-րդ ամսում, ինչը որևէ կերպ չի հակասում Օրենքին), ապա

Պատվիրատուն պարտավոր է այդ գումարը վճարել նախատեսված ամսում, այլ ոչ թե 30 օրում:

Հիմնվելով ՀՀ գնումների մասին օերնսդրության պահանջների վրա, ինպես նաև վերոնշյալ վերլուծությունով պայմանավորված հայտնում ենք, որ Ձեր անհամաձայնությունը և պահանջը հակասում է Օրենսդրության տրամաբանությանը, ինչպես նաև ընթացականգի հրավերի և դրա արդյունքում կնքված պայմանագրի պայմաններին:

Միաժամանակ հայտնում ենք, որ ընթացակարգի շրջանակներում դուք ստանձնել եք պարտավորություն սահմանված ժամկետում վճարման պայմանի մասով համաձայնագիր կնքելու և պատվիրատուին ներկայացնելու համար, ուստի համաձայնագրի կնքման ծանուցման արդյունքում այն սահմանված ժամկետում Պատվիրատուին չներկայացնելու դեպքում կզրկվեք այն կնքելու իրավունքից»:

6. Այնուհետև Պատվիրատուն «Խաչպար» ՍՊԸ-ին ուղղված 25.05.2022թ. թիվ 08-133 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 24.01.2022թ կնքվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15 ծածկագրով պայմանագիրը: Նշված պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների, ինչպես նաև պայմանագրի 8.15 կետի պայմանների «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է ֆինանսական միջոցների հատկացման և վճարման պայմանի վերաբերյալ համաձայնագիր կնքելու ծանուցումը նշված պայմանագրի մասով Ձեզ ներկայացվել են 26.04.2022թ-ին, ուստի Դուք կրում էիք պարտավորություն մինչև 18.05.2022թ. ներառյալ Պատվիրատուին ներկայացնել կնքված համաձայնագիրը, ինչը չեք կատարել:

Միաժամանակ, մինչև համաձայնագիր կնքվելը Ձեր կողմից իրականցվել են որոշ մատակարարումներ պայմանագրերի շրջանակներում, որոնք ընդունվել են Պատվիրատուի կողմից՝ անհրաժեշտությունից ելնելով, ուստի Պատվիրատուն համարում է այդ մասով Պայմանագիրը Ձեր կողմից փաստացի կատարված:

Հիմք ընդունելով վերոգրյալները նշված պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է Պատվիրատուի կողմից պայմանագրերի չկատարված մասով՝ 180180 (հարյուր ութանասուն հազար հարյուր ութանասուն) ՀՀ դրամի չափով, որի հաշվարկը ներկայացվում է ստորև՝ աղյուսակի տեսքով:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն Ձեր ընկերությունից կգանձվի պայմանագրի և որակավորման ապահովումները պայմանագրի լուծված մասին համապատասխան:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Վաճառողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծվելու մասին պատշաճ ծանուցված սույն ծանուցումը Գնորդի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից: (...)»

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 25.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9975-2022 գրությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 26.05.2022թ. թիվ 08-137 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Խաչպար» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ ***եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր***

կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: ***<u>Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:</u>***

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: ***<u>Ընդ որում, վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:</u>***

Այսպես, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 24.01.2022թ. կնքվել է թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Պատվիրատուի կողմից 26.04.2022թ. «Խաչպար» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագրի նախագիծը և առաջարկվել 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից կնքված համաձայնագիրը՝ երկու օրինակից:

«Խաչպար» ՍՊԸ-ն ուղղված Պատվիրատուին ուղղված 27.04.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«27.04.2022թ. «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է 24.01.2022թ. կնքված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով գնման Պայմանագրի թիվ 1 ամաձայնագիրը, որի թիվ 1.2 կետում գրված է՝ «1.2 Սահմանված կարգով ընդունված Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է 90 օրվա ընթացքում»:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ կնքված Պայմանագրի թիվ 3.3 կետում՝ որպես վճարման համար նախատեսված ժամկետ, սահմանված է մինչև 30 աշխատանքային օրը, ուստի ղեկավարվելով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» ծածկագրով գնման պայմանագրի թիվ 8.5 կետով՝ «Խաչպար» ՍՊԸ-ն իր անհամաձայնությունն է հայտնում այդ փոփոխությանը, և պնդում է, որ Համաձայնագրում վճարման ժամկետը նշվի համաձայն Պայմանագրով սահմանվածի՝ մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում»:

Պատվիրատուն «Խաչպար» ՍՊԸ-ին ուղղված 28.04.2022թ. թիվ 08-098 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր 27.04.2022թ. ներկայացրած անհամաձայնությանը՝ կնքվելիք համաձայնագրում նախատեսված վճարման ժամկետի կապակցությամբ, հայտնում ենք հետևյալը.

1) 24.01.2022թ կնքված թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15 պայմանագրի 3.3 կետում նախատեսված է, որ «Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը»:

2) պայմանագրի 8.15 կետով նախատեսված է, որ «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական

միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընտացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

Այս վերոնշյալ դրույթները մեկնաբանելիս չպետք է նախադասության մեջից առանձնացնել մի բառակապակցություն (վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում) և մեկնաբանել այն ինչպես հարմար է, քանի որ դա չի համապատասխանում նախադասության ուղիղ իմաստին: Նախադասությունները պետք է կարդալ ամբողջությամբ և մեկնաբանել ամբողջ միտքը նախադասություն առ նախադասություն. այն է՝

Նախադասություն 1. «Դրամական միջոցների փոխանցումը կատորվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին»:

Մեկնաբանություն 1. Այսինքն, եթե նախապես առկա չէ վճարման ժամանակացույց և այնտեղ ըստ ամիսների բաշխված գումարներ (ինչպես լինում Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարված ընթացակարգերում), հետևաբար որևէ ամսում(ժամկետում) վճարման մասին նախապես խոսք գնալ չի կարող:

Նախադասություն 2. «Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսանան միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մեկնաբանություն 2. Այսինքն, եթե վճարման ժամանակացույցով որևէ ամսում նախատեսված է ֆինանսական միջոց, և ապրանքը ընդունված է Պատվիրատուի կողմից, ապա այդ ամսում Պատվիրատուն պարտավոր է կատարել վճարումը, մինչև ամսի 20-ը ընդունված ապրանքների համար հենց այդ ամսում (այսինքն ավելի շուտ քան 30 օրն է), իսկ ամսի 20-ից հետք ընդունված ապրանքի համար 30 օրում: Այնուհետև, Եթե վճարման ժամանակացույցով այդ ամսում նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, այլ նախատեսված են ուրիշ ամսում (ասենք օրինակ նախատեսված են ապրանքի ընդունմանը հաջորդող 4-րդ ամսում, ինչը որևէ կերպ չի հակասում Օրենքին), ապա

Պատվիրատուն պարտավոր է այդ գումարը վճարել նախատեսված ամսում, այլ ոչ թե 30 օրում:

Հիմնվելով ՀՀ գնումների մասին օերնսդրության պահանջների վրա, ինպես նաև վերոնշյալ վերլուծությունով պայմանավորված հայտնում ենք, որ Ձեր անհամաձայնությունը և պահանջը հակասում է Օրենսդրության տրամաբանությանը, ինչպես նաև ընթացականգի հրավերի և դրա արդյունքում կնքված պայմանագրի պայմաններին:

Միաժամանակ հայտնում ենք, որ ընթացակարգի շրջանակներում դուք ստանձնել եք պարտավորություն սահմանված ժամկետում վճարման պայմանի մասով համաձայնագիր կնքելու և պատվիրատուին ներկայացնելու համար, ուստի համաձայնագրի կնքման ծանուցման արդյունքում այն սահմանված ժամկետում Պատվիրատուին չներկայացնելու դեպքում կզրկվեք այն կնքելու իրավունքից»:

Այնուհետև Պատվիրատուն «Խաչպար» ՍՊԸ-ին ուղղված 25.05.2022թ. թիվ 08-133 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 24.01.2022թ կնքվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15 ծածկագրով պայմանագիրը: Նշված պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների, ինչպես նաև պայմանագրի 8.15 կետի պայմանների «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է ֆինանսական միջոցների հատկացման և վճարման պայմանի վերաբերյալ համաձայնագիր կնքելու ծանուցումը նշված պայմանագրի մասով Ձեզ ներկայացվել են 26.04.2022թ-ին, ուստի Դուք կրում էիք պարտավորություն մինչև 18.05.2022թ. ներառյալ Պատվիրատուին ներկայացնել կնքված համաձայնագիրը, ինչը չեք կատարել:

Միաժամանակ, մինչև համաձայնագիր կնքվելը Ձեր կողմից իրականցվել են որոշ մատակարարումներ պայմանագրերի շրջանակներում, որոնք ընդունվել են Պատվիրատուի կողմից՝ անհրաժեշտությունից ելնելով, ուստի Պատվիրատուն համարում է այդ մասով Պայմանագիրը Ձեր կողմից փաստացի կատարված:

Հիմք ընդունելով վերոգրյալները նշված պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է Պատվիրատուի կողմից պայմանագրերի չկատարված մասով՝ 180180 (հարյուր ութանասուն հազար հարյուր ութանասուն) ՀՀ դրամի չափով, որի հաշվարկը ներկայացվում է ստորև՝ աղյուսակի տեսքով:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն Ձեր ընկերությունից կգանձվի պայմանագրի և որակավորման ապահովումները պայմանագրի լուծված մասին համապատասխան:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Վաճառողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծվելու մասին պատշաճ ծանուցված սույն ծանուցումը Գնորդի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից: (...)»

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 25.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ 24.04.2022թ. «Խաչպար» ՍՊԸ-ն էլ. փոստով ստացել է «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ–ի կողմից առանց ամիս-ամսաթվի ներկայացված թիվ 1 Համաձայնագիրը, որի թիվ 1.2 կետում գրված է եղել՝ «1.2 Սահմանված կարգով ընդունված Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է 90 օրվա ընթացքում», որտեղ նշված «90» թիվը չի համապատասխանել կնքված Պայմանագրի 3.3 կետով սահմանված վճարման ժամկետին, որը սահմանված է եղել մինչև 30 աշխատանքային օր:

Այսպիսով՝ Պայմանագրի 3.3 կետով սահմանվել է, որ Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Պայմանագրի 8.5 ենթակետի համաձայն՝ Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից Ընկերությանը ներկայացված թիվ 1 Համաձայնագրի 1.2 ենթակետով սահմանվել է, որ սահմանված կարգով ընդունված Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է 90 օրվա ընթացքում:

Այսինքն՝ Պատվիրատուն 24.01.2022թ. կնքված թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15» պայմանագրի շրջանակներում կնքման ենթակա համաձայնագիրը կազմելիս կատարել է վճարման պայմանի փոփոխություն, արդյունքում խախտելով Պայմանագրի 8.5 ենթակետով հստակ սահմանված դրույթը, ինչն էլ հիմք է հանդիսացել Ընկերության կողմից թիվ 1 Համաձայնագրի չկնքման համար:

Նման պայմաններում գտնում եմ, որ Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող վրա հասնել և հանգեցնել Ընկերության նկատմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության կիրառմանը, այն է՝ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9975-2022 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**